ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Ա.Ա. Թադևոսյան

« 04 » հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Միջազգային և Եվրոպական իրավունքի

Հեղինակ՝ Է.Ա. Ալավերդյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները՝ բովանդակությունը և դատական պրակտիկան

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

«Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները՝ բովանդակությունը և դատական պրակտիկան» ուսումնական ծրագիրը նախատեսված է «Իրավաբանություն» ուսումնասիրող ուսանողների համար։
Առարկայի ուսումնասիրության ընթացքում ուսանողները ծանոթանում են մարդու իրավունքների միջազգային իրավունքի (ՄԻՄԻ) փաստաթղթերին, ինչպես նաև հմտություններ են ձեռք բերում պաշտպանելու մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները ազգային, տարածաշրջանային և միջազգային ատյաններում և քվազի-դատական կառույցներում (պայմանագրային մարմիններ, այլ հատուկ հաստատություններ)։
Ժամանակակից ինքնիշխան պետությունների սահմանադրական կարգի պահպանության հարցերի պարզաբանման համար, դրանց զարգացման հեռանկարների, մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական արժեքների առաջնահերթության հարցերի որոշման խնդրում սկզբունքային նշանակություն ունի պետության և հասարակության մեջ քաղաքացու և մարդու իրավական կարգավիճակի և համապատասխան իրավունքների ու պարտականությունների ուսումնասիրությունը։
Առարկայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկա ժամանակաշրջանում ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համար մարդու իրավունքները դարձել են համընդհանուր ընդունված նորմ։ Առարկայի արդիականությունը կայանում է նաև նրանում, որ հնարավոր է դառնում հաշվի առնել ոչ միայն մարդու իրավունքների միջազգային/տարածաշրջանային իրավունքի նորմերը, այլև դիրքորոշումները, որոնք արտահայտվել են ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների կողմից, ինչպես նաև ՄԱԿ-ի Միջազգային արդարադատության դատարանի (ՄԱԴ), Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) որոշումներում և դրանց ազդեցությունն ազգային իրավակիրառական պրակտիկայի վրա։

Դասընթացի նպատակները և խնդիրները

Դասընթացի նպատակներն են
- ձևավորել հիմնարար պատկերացումներ մարդու իրավունքների համակարգի, պետության քաղաքականության և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում դրա նշանակության մասին
- սերմանել միջազգային/տարածաշրջանային նորմերի և ազգային օրենսդրության ոլորտում մարդու իրավունքների դատական և քվազի-դատական պաշտպանության գործուն հմտություններ
- ուսանողների մոտ ձևավորել իրավական պետության կայացման և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրավաբանների հստակ դերի և նշանակության ընկալում

Դասընթացի խնդիրներն են
- ուսումնասիրել մարդու իրավունքների միջազգային իրավուքի և տարածաշրջանային (եվրոպական) իրավուքի մարդու իրավունքների ոլորտի հիմնական փաստաթղթերը և դրանք համադրել ՀՀ/ՌԴ մարդու իրավունքների ոլորտի օրենսդրության հետ

- ծանոթանալ և համեմատական վերլուծություն կատարել մարդու իրավունքների պաշտպանության հիմնական մեխանիզմների, դրանց առանձնահատկությունների և տարբերությունների շուրջ
- ձևավորել մարդու իրավունքների պաշտպանության հմտություններ, օգտագործելով ՄԱԿ-ի և ԵԽ-ի դատական և քվազի-դատական պրակտիկան, ինչպես նաև ՄՔԴ-ի և այլ մարմինների պրակտիկան
- պարզաբանել հիմնարար իրավական դիրքորոշումները, որոնք արտահայտվել են դատական և քվազի-դատական մարմինների կողմից մարդու իրավունքների կոնկրետ դեպքերիի վերաբերյալ որոնք ապահովում և պաշտպանում են խախտված կամ վիճարկվող իրավունքները
- բացահայտել միջազգային/տարածաշրջանային դատարանների որոշումների ազդեցությունը ՀՀ/ՌԴ դատական պրակտիկայի վրա

Դասընթացի օբյեկտը և առարկան
Դասընթացի օբյեկտը դա մարդու հիմնարար իրավունքներն ու ազատություններն են, իսկ առարկան դրանց բովանդակությունը և մարդու իրավունքների պաշտպանության դատական և քվազի-դատական մարմինների պրակտիկան:

Դասընթացի մուտքային պահանջները
«Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները՝ բովանդակությունը և դատական պրակտիկան» դասընթացը բովանդակային և տրամաբանական կապի մեջ է «Միջազգային իրավունքի ներածություն», «Սահմանադրական իրավունք», «Իրավունքի տեսություն» առարկաների հետ:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները
Դասընթացի յուրացման արդյունքն ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների առկայություն ՈԱՇ-ի վերջնարդյունքներին համապատասխան:
Գիտելիքները
- Մարդու իրավունքների միջազգային իրավունքի (ՄԻՄԻ) մասին հիմնարար հասկացությունների իմացություն
- Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային դատական և քվազի-դատական, տարածաշրջանային (ՄԻԵԴ), ազգային համակարգի հաստատությունների և գործիքակազմի մասին իմացություն
- Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային դատական և քվազի-դատական, տարածաշրջանային (ՄԻԵԴ) պրակտիկայի մարդու իրավունքների պաշտպանության ազգային համակարգի ազդեցուտյան մասին իմացություն
Հմտությունները
- Գիտելիքի կիրառման հմտությունները՝
1. Կարող է իրականացնել մասնագիտական գործունեություն ժամանակակից իրավագիտակցության, իրավական մտածողության և իրավական մշակույթի հիման վրա
2. Տիրապետում է մարդու իրավունքների միջազգային, տարածաշրջանային և ազգային պաշտպանության մեխանիզմներին
- Ընդհանրական իմացական հմտությունները՝

1. Կարողանում է օգտագործելով օրենսդրական և իրավապաշտպանության պրակտիկան ձևակերպել բողոքներ և հայցադիմումներ քվազի-դատական և դատական մարմիններին դիմելու՝ մարդու իրավունքները պաշտպանելու, ինչպես նաև հնարավորինս կանխելու մարդու իրավունքների խախտումները:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝
- Ինքնուրույնություն և պատասխանատվություն
1. Կարող է ինքնուրույն իրականացնել մասնագիտական գործունեություն իրավագիտության իմացության, իրավական մտածողության, իրավական մշակույթի և միջազգային/ տարածաշրջանային դատական ատյանների փորձի վրա
2. Կարող է որոշումներ կայացնել և իրավական գործողություններ ձեռնարկել մարդու իրավունքները պաշտպանելու համար
3. Բացահայտում է պոտենցիալ (օրենսդրական, իրավապահ, քաղաքական և այլն) պատճառները և իրավախախտներին:

Դասավանդման եղանակներն ու մեթոդները
Դասավանդման ընթացքում կիրառվում են գիտական ընդհանուր և մասնագիտական հատուկ մեթոդներ, իսկ հիմնական եղանակները հետևյալն են.
- Դասախոսությունների ընդացքում կիրառվում էն ինտերակտիվ դասախոսություններ, պրեզենտացիաներ և անմիջական տեստավորումներ:
- Սեմինարներին շեշտը դրվում է ինքուրույն գրավոր աշխատանքների (էսսե, համեմատական աղյուսակ, իրավահամեմատական վերլուծություն) և դրանց բանավոր ներկայացման վրա:
Սեմինարի ձևաչափով դասընթացները նպատակաուղղված են խորացնելու և ընդլայնելու թեմայի ուսումնասիրության ընթացքում ստացած տեսական գիտելիքները:
Դասընթացն անց է կացվում ինտերակտիվ ձևաչափով ուսանողների ակտիվ մասնակցությամբ՝ նպատակ ունենալով քննարկումների և բանավեճերի արդյունքում նպաստել նրանց մոտ վերլուծական մտածողության զարգացմանը:
Սեմինարը սովորաբար կազմված է տեսական հարցերի քննարկումից, ինչն ուսանողներից պահանջում է ուսումնասիրել ինչպես հիմնական թեմատիկ գրականությունը, այնպես էլ առաջարկվող լրացուցիչ գրականությունը:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում
Դասընթացը ներառված է «Կամընտրական դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 8 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է **ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:**

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունը, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.1.Դասախոսություններ	**8**

1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**8**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**56**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**32**
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	**24**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսություններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Մարդու իրավունքների միջազգային համակարգը և մարդու իրավունքների միջազգային պաշտ-ություն՝ պայմանագրային մարմիններ, դատական և քվազի-դատական մարմիններ, դրանց նշանակությունը և պրակտիկան: Իրավաբանների դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում:	**2**	**1**	**1**
Թեմա 2. Մարդու բացարձակ իրավունքները: Խոշտանգումների կիրառման արգելք: Դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ ՀՀ/ՌԴ սահմանադրական նորմերի հետ համեմատություն: ՄԻԵԴ-ի որոշումների օրինակներ:	**2**	**1**	**1**
Թեմա 3. Միջազգային մարդասիրական իրավունք (ՄՄԻ): Փախստականների միջազգային իրավունք (ՓՄԻ): Միջազգային իրավունքի դեմ հանցագործություններ: ՄՔԴ՝ կանոնադրություն, դատարանին ընդդատյա հանցագործությունները: ՀՀ/ՌԴ ազգային օրենսդրությունների հետ համեմատություն:	**2**	**1**	**1**

Թեմա 4. Կյանքի իրավունք։ Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք։ Ձերբակալման պահին անհապաղ դատարան դիմելու և ձերբակալման իրավաչափության բողոքարկման իրավունք։ Միջազգային և ազգային պրակտիկա։	2	1	1
Թեմա 5. Արդար դատավարության իրավունք։ Օրինականության պահպանման ազգային և տարածաշրջանային (եվրոպական) պրակտիկա։	2	1	1
Թեմա 6. Հիմնական ազատությունների սահմանափակումները։ Մարդու իրավունքների բնագավառում պարտավորությունների բացակայություն։ Միջազգային (տարածաշրջանային) նորմերի և սահմանափակումների սահմանների համադրում ՀՀ/ՌԴ սահմանադրությունների նորմերի։ Ազգային և տարածաշրջանային պրակտիկա։	2	1	1
Թեմա 7. Խտրականության արգելք։ ՄԱԿ և ԵԽ հիմնական կոնվենցիաները և ՀՀ/ՌԴ օրենսդրությունը։ Հատուկ պայմանագրային մարմիններ։ ՄԱԿ-ի ՄԱԴ-ի դատական որոշումների օրինակներ։ Միջազգային (տարածաշրջանային) դատական և քվազի-դատական մարմինների որոշումների կատարման խնդիրները։	2	1	1
Թեմա 8. Տնտեսական իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները։ Մշակութային իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերի և ՀՀ/ՌԴ սահմանադրական նորմերը։ Մշակութային իրավունքների դատական պաշտպանությունը։ Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների միջազգային պաշտպանությունը։	1	1	
Թեմա 9. Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը (ԺԻԻ) որպես մարդու իմպերատիվ (jus cogens) իրավունքի	1		1

առանձնահատկությունները, նշանակությունը, արդիականությունը։ Դատական և քվազի-դատական պրակտիկա։ Միջազգային հարաբերություններում և պետություններում իրավունքի գերակայության սկզբունքը։			
Ընդամենը	**16**	**8**	**8**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Մարդու իրավունքների միջազգային համակարգը և մարդու իրավունքների միջազգային պաշտպանությունը՝ պայմանագրային մարմիններ, դատական և քվազի-դատական մարմիններ, դրանց նշանակությունը և պրակտիկան։ Իրավաբանների դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում

- ՄԱԿ մարմինների համակարգը՝ ՄԱԿ-ի կանոնադրություն, Մարդու իրավունքների բիլլը (օրինաշարը), խտրականության արգելքի մասին կոնվենցիաներ, ՄՄԻ, ՓՄԻ և այլն։ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիա (Եվրոպական կոնվենցիա)։
- Պայմանագրային մարմիններ, դատական և քվազի-դատական մարմիններ ։Բողոքն ընդունելու մասին որոշում կայացնելու ընթացակարգեր։ Արդարադատությունը՝ ցանկացած իրավիճակում՝ մարդու իրավունքների պաշտպանության նորմերի ազդեցությունը ազգային դատական համագարգի վրա։
- ՄԱԿ-ի ՄԱԴ, ՄԻԵԴ, ՄՔԴ։ Պայմանագրային և դատական ու քվազի-դատական մարմինների որոշումների նշանակությունը ազգային արդարադատության համակարգում։
- Պայմանագրերի ազդեցությունը ժամանակի ու տարածության մեջ. Մարդու իրավունքների պաշտպանության մարմինները. «Գորշ» գոտիներ. Արդյունավետ վերահսկողություն։
- Մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային մարմինները. Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)։ Ազգային արդարադատության համակարգում ՄԻԵԴ նախադեպերի նշանակությունը։
- Մարդու իրավունքների պաշտպանության ազգային մարմիններն ու մեխանիզմները։ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ)՝ օրենսդրություն, ՄԻՊ-ի լրացուցիչ պարտականությունները, ՄԻՊ-ի զեկույցներն ու պրակտիկան։

Թեմա 2. Մարդու բացարձակ իրավունքները։ Խոշտանգումների կիրառման արգելք։ Դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ ՀՀ/ՌԴ սահմանադրական նորմերի հետ համեմատություն։ ՄԻԵԴ-ի որոշումների օրինակներ

- Ունիվերսալ և տարածաշրջանային փաստաթղթերի հիմնական նորմերը։
- Միջազգային դատական ու քվազի-դատական մարմինների կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները։ Կյանքի իրավունքի պաշտպանության պետության պոզիտիվ պարտավորությունները։ Կյանքի իրավունքի գործերում ապացուցումը

որպես պարտականություն: Ոչ կառավարական կազմակերպությունների պատասխանատվությունը: Կյանքի իրավունքն արտակարգ իրավիճակներում:
- Միջազգային փաստաթղթերում ընդհանուր արգելք ՄԱԿ/ԵԽ կոնվենցիաները խոշտանգումների, այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի վերաբերյալ: ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտե
- խոշտանգումների, այլ դաժան վերաբերմունքի և պատժի ձևերի հասկացությունը
- Միջազգային դատական ու քվազի-դատական մարմինների պրակտիկան:
- Ազատազրկման պայմաններում ոչ պատշաճ պայմաններում պահելու ձևերը որպես անմարդկային վերաբերմունքի տեսակ: Մենախցում պահելու պայմանները: Բժշկական օգնություն տրամադրելու պարտավորությունը: Մարմնական պատիժների և նվաստացման արգելքը:
- Մշտադիտարկման մեխանիզմներ:

Թեմա 3. Միջազգային մարդասիրական իրավունք (ՄՄԻ): Փախստականների միջազային իրավունք (ՓՄԻ): Միջազգային իրավունքի դեմ հանցագործություններ: ՄՔԴ՝ կանոնադրություն, դատարանին ընդդատյա հանցագործությունները: ՀՀ/ՌԴ ազգային օրենսդրությունների հետ համեմատություն:

- ՄՄԻ: Ժնևի և Հաագայի մարդասիրական իրավունք՝ պատմական ակնարկ, փոխկապակցութուն, հիմնական կոնվենցիաներ, արձանագրություններ: Մարդասիրական իրավունքի նորմերի խախտումները և ֆիզիկական անձանց պատասխանատվությունը: Կյանքի իրավունքը զինված բախումների ընթացքում: Մարդկության/մարդկայնության/մարդասիրության դեմ հանցագործություններ: Պատերազմական հանցագործություններ: Ագրեսիայի հանցագործություն: ՄՔԴ-ի որոշումների օրինակներ՝ որոշումների կատարման հետ կապված խնդիրներ/պրոբլեմներ:
- ՓՄԻ՝ պատմական ակնարկ, հիմնական կոնվենցիաներ, արձանագրություններ, Եվրոպական Միության (ԵՄ) կողմից 2001թ. ընդունված Ժամանակավոր ապաստանի մասին հրահանգ, փախստականներին վերաբերվող պետական (ՀՀ/ՌԴ) օրենսդրություն: ՓՄԻ արդիականությունը՝ տարածաշրջանում և երկրում:
- Ապաստան հայցողները: Non-refoulement սկզբունքը: Մահապատժի կիրառման ռիսկը այլ պետուտյանը հանձնելու համատեքստում:
- Միջազգալին և ազգային դատարանների որոշումների օրինակների վերլուծություն:

Թեմա 4. Կյանքի իրավունք: Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ձերբակալման պահին անհապաղ դատարան դիմելու և ձերբակալման իրավաչափության բողոքարկման իրավունք: Միջազգային և ազգային պրակտիկա:

- Ձերբակալություն հասկացությունը: Կամայական և անօրինական հասկացությունների նշանակությունը: Ձերբակալության հիմնավորման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում: ՄԱԿ և ԵԽ շրջանակներում ընդունված դիմումները: Ձերբակալության ծանուցման իրավունքը, պաշտպանի հետ շփման հասանելիությունը,պաշտպանի հետ շփման գաղտնիությունը:
- Կալանքի տակ վերցնելը: Անհապաղ դատարան ներկայացնելու պահանջը: Կալանքի տակ պահելը: Անհապաղության և կրկնողության նշանակությունը: Ձերբակալության իրավաչափությունը բողոքարկելու իրավունքը: Հարցաքննության դատահիրավական երաշխիքները:

- Հարցաքննություն: Նախնական կալանքի խցի (ՆԿԽ) ստանդարտները: Բժշկական զննություն:
- Դատական և քվազի-դատական մարմինների որոշումները:

Թեմա 5. Արդար դատավարության իրավունք:
Օրինականության պահպանման ազգային և տարածաշրջանային (եվրոպական) պրակտիկա:

- Արդար դատաքննության իրավունքի առանձնահատկությունները և կիրառման ոլորտը: Պարտականություններից հրաժարվելու արգելք: Անկախ և անկողմնակալ տրիբունալի իրավունք: Դատարանից օգտվելու իրավունք:
- Կողմերի հավասարություն: Հրապարակային քննության իրավունք: Պաշտպանության իրավունք, սեփական հայեցողությամբ պաշտպան ընտրելու իրավունք: Դատավճիռը բողոքարկելու իրավունք:
- Օրինականության սկզբունքները:
- Անհատական քրեական պատասխանատվության սկզբունքները:
- Դատական և քվազի-դատական մարմինների որոշումները:

Թեմա 6. Հիմնական ազատությունների սահմանափակումները:
Մարդու իրավունքների բնագավառում պարտավորությունների բացակայություն:
Միջազգային (տարածաշրջանային) նորմերի և սահմանափակումների սահմանների համադրում ՀՀ/ՌԴ սահմանադրությունների նորմերի:
Ազգային և տարածաշրջանային պրակտիկա:

- Կարծիքի արտահայտման ազատություն: Հավաքների ազատության հիմնական սկզբունքները: Ազատության սահմանափակման հիմքերն ըստ միջազգային իրավական փաստաթղթերի և իրավական ու քվազի-իրավական մարմինների պրակտիկան:
- Ազատությունների սահմանափակումը ՀՀ/ՌԴ սահմանադրությունների համաձայն:
- Արտակարգ իրավիճակի հայտարարումը:
- Իրավունքներ, որոնց համաձայն անթույլատրելի է հրաժարվել պարտավորություններից:
- Պարտավորություններից հրաժարվելու ընթացակարգը:

Թեմա 7. Խտրականության արգելք: ՄԱԿ և ԵԽ հիմնական կոնվենցիաները
ՀՀ/ՌԴ օրենսդրությունը: Հատուկ պայմանագրային մարմիններ: ՄԱԿ-ի ՄԱԴ-ի դատական որոշումների օրինակներ:
Միջազգային (տարածաշրջանային) դատական և քվազի-դատական մարմինների որոշումների կատարման խնդիրները

- Միջազգային իրավունքի՝ խտրականությունն արգելող հիմնական նորմերն ու սկզբունքները: Խտրականության հիմքերը: Երկակի/բազմակի խտրականություն:
- Խտրականության ապացուցման առանձնահատկությունները, խտրականության ապացուցման բեռը: Խտրականության փաստի ապացուցվածության գնահատման չափորոշիչները:
- Դատական և քվազի-դատական մարմինների պրակտիկան:
- ՄԱԿ-ի ՄԱԴ-ի որոշումները Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի հայցերով:

Թեմա 8. Տնտեսական իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները: Մշակութային իրավունքներին վերաբերող ՀՀ/ՌԴ սահմանադրական և միջազգային իրավունքի նորմերը: Մշակութային իրավունքների դատական պաշտպանությունը: Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների միջազգային պաշտպանությունը:

- Միջազգային պայմանագրերով և պետական (ՀՀ/ՌԴ) օրենսդրությամբ ամրագրված տնտեսական իրավունքների պաշտպանության հիմնական նորմերը:
- Տնտեսական իրավունքի միջազգային պաշտպանության առկա մեխանիզմները:
- Սեփականության իրավունք: Մշակութային իրավունքներ և դրանց դատական պաշտպանությունը:
- Ազգային օրենսդրությունը և իրավակիրառական պրակտիկան:

Թեմա 9. Ժողովուրդների ինքնորոշման իրավունք (ԺԻԻ) որպես մարդու իմպերատիվ (jus cogens) իրավունք՝ առանձնահատկությունները, նշանակությունը, արդիականությունը: Դատական և քվազի-դատական պրակտիկա:
Իրավունքի գերակայության սկզբունքը պետական օրենսդրությունում և միջպետական հարաբերություններում:

- Պատմական ակնարկ, ԺԻԻ զարգացումը և ամրագրումը ՄԱԿ-ի կանոնադրությունում:
- ԺԻԻ-ի դերն ու նշանակությունը մարդու իրավունքների համակարգում:
- Տարաբնույթ մեկնաբանությունների իրավական/իրավաբանական ճշգրտությունը/կոռեկտությունը:
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի նախադեպային գործեր. ինքնորոշում:
- Տեսության հարցերի և իրավակիրառական պրակտիկայի արդիականություն:

Ամբիոնը/գիտական խումբը տիրապետում է նյութատեխնիկական բազային, որը համապատասխանում է գործող սանիտարատեխնիկական նորմերին և ապահովում է ուսումնական պլանով նախատեսված բոլոր ձևաչափերի տեսական և գործնական պատրաստվածությունը:
Ուսումնական, ուսումնամեթոդական բազան և այլ գրադարանատեղեկատվական ռեսուրսներն ապահովում են ուսումնական գործընթացը և երաշխավորում են ուսումնական ծրագրի որակապես յուրացումը:
ՀՌՀ-ն և Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնը տիրապետում են գրադարանի, որը ներառում է միջազգային իրավունքի հիմնական խնդիրների վերաբերյալ գիտական և ուսումնական գրականություն: Գրականությունն անհրաժեշտ է ուսումնական կուրսի յուրացման համար, ինչպես նաև առկա է համացանցի ազատ մուտքի հնարավորություն:
Ուսումնական կուրսի շրջանակներում նախատեսվող նյութերը տեղադրված են նաև ՄԱԿ-ի և HUDOC կայքերում:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

Նորմատիվ իրավական ակտեր և գրականություն

ա) Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2005թ. և 2015թ.փոփոխություններով)
2. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 5-ին)
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք (ընդունվել է 1985թ. դեկտեմբերի 6-ին)
4. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին), 6. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 1998թ. հուլիսի 1-ին)
5. ՀՀ աշխատանքային օրենսգիրք (ընդունվել է 2004թ. նոյեմբերի 9-ին)
6. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին)
7. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին)
8. ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք (ընդունվել է 2016թ. մայիսի 25-ին)
9. ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենք (ընդունվել է 2018թ. փետրվարի 7-ին)
10. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին)
11. ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք (ընդունվել է 2016թ. մայիսի 25-ին)
12. ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենք (ընդունվել է 2018թ. փետրվարի 7-ին)
13. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք (ընդունվել է 2016թ. դեկտեմբերի 16-ին)
14. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին», ՀՀ օրենք (ընդունվել է 1995թ. նոյեմբերի 16-ին)
15. «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 25-ին)
16. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2008թ. նոյեմբերի 27-ին)
17. «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001թ. սեպտեմբերի 26-ին)
18. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին)
19. «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2011թ. ապրիլի 14-ին)
20. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենք
21. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1996թ. մայիսի 29-ին)
22. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. սեպտեմբերի 24-ին)
23. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին)
24. «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2007թ. փետրվարի 22-ին)
25. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 3-ին)
26. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 23-ին)
27. «Հայաստանի Հանրապետությում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1993թ. մայիսի 24-ին),
28. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1996թ. ապրիլի 4-ին)
29. «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1993թ. հունվարի 7-ին)
30. «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1994թ. հունիսի 14-ին)
31. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1996թ. ապրիլի 4-ին)

32. «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1993թ. հունվարի 7-ին)
33. «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1994թ. հունիսի 14-ին)
34. «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2011թ. նոյեմբերի 15-ին)
35. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. ապրիլի 16-ին)
36. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 11-ին)
37. «Զինապարտության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1998թ. սեպտեմբերի 16-ին)
38. «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1998թ. դեկտեմբերի 30-ին)
39. «Կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1999թ. ապրիլի 14-ին)
40. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 14-ին)
41. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասին կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2005թ. մայիսի 25-ին)
42. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2005թ. հուլիսի 8-ին)
43. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2005թ. նոյեմբերի 15-ին)
44. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001 թ. դեկտեմբերի 4-ին)
45. «Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006թ. հունիսի 15-ին)
46. «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006թ. նոյեմբերի 27-ին)
47. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. փետրվարի 6-ին)
48. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին)
49. «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2000թ. դեկտեմբերի 5-ին)
50. «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին)
51. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2002թ. նոյեմբերի 20-ին)
52. «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2009թ. հոկտեմբերի 7-ին)
53. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2010թ. դեկտեմբերի 22-ին)
54. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2010թ. դեկտեմբերի 22-ին)
55. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 17-ին)
56. «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2004թ. մարտի 16-ին)
57. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենք (ընդունվել է 2016թ. դեկտեմբերի 16-ին)

58. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցները և լրացուցիչ պարտականությունները

բ) Միջազգային իրավական ակտեր

1. ՄԱԿ-Ի կանոնադրություն (ընդունվել է 1945թ. հունիսի 26-ին)
2. Կոնվենցիա «Ցեղասպանության ոճրագործության կանխման և դրա պատժի մասին» (ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 9-ին, ՀՀ վավերացրել է 10.12.1991թ.)
3. Մարդու իրավունքնեի համընդհանուռ հռչակագիր (ընդունվել է 10.12.1948թ., ՀՀ միացել է 1992թ.)
4. Միջազգային դաշնագիր «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» (ընդունվել է 16.12.1966թ., ուժի մեջ է մտել 23.03.1976թ., ՀՀ միացել է 01.04.1991թ.),
5. Միջազգային դաշնագիր «Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին» (ընդունվել է 16.12.1966թ., ուժի մեջ է մտել 03.01.1976թ., ՀՀ միացել է 09.06.1993թ.)
6. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրություն (ընդունվել է 1966թ. դեկտեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 23.03.1976թ., ՀՀ միացել է 01.04.1991թ.)
7. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրություն (ընդունվել է 1989թ. դեկտեմբերի 15-ին, ուժի մեջ է մտել 11.07.1991թ.)
8. «Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին» դաշնագրին կից կամընտիր արձանագրություն (ընդունվել է 2008թ. դեկտեմբերի 10-ին)
9. Մարդու իրավունքների միջազգային շրջանակ (1948-2006 թթ.)
10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա (ընդունվել է 4 նոյեմբերի 1950թ., ուժի մեջ է մտել 03.09.1953թ.)
11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային կից արձանագրություն թիվ 1 (ընդունվել է 1952թ. մարտի 20-ին)
12. «Եվրոպական սոցիալական խարտիա» (ընդունվել է 1961 թ. հոկտեմբերի 18-ին)
13. Կոնվենցիա «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» (ընդունվել է 10.06.1930թ., ՀՀ վավերացրել է 25.10.2004թ.)
14. Կոնվենցիա «Հարկադիր աշխատանքի վերացման մասին» (ընդունվել է 05.06.1957թ., ՀՀ վավերացրել է 25.10.2004թ.)
15. Կոնվենցիա «Աշխատավարձի պաշտպանության մասին» (ընդունվել է 08.06.1949թ., ՀՀ միացել է 25.10.2004թ.)
16. Կոնվենցիա «Փախստականների կարգավիճակի մասին» (ընդունվել է 28. 07. 1951 թ., ՀՀ միացել է 12.04.1993թ.)
17. Փախստականների կարգավիճակի մասին արձանագրություն» (ընդունվել է 31.01.1967թ., ՀՀ միացել է 12.04.1993թ.)
18. Կոնվենցիա «Ապատրիդների (քաղաքացիության չունեցող անձանց) կարգավիճակի մասին» (ընդունվել է 28.09.1954թ., ՀՀ միացել է 16.03.1994 թ.)
19. Կոնվենցիա «Ապաքաղաքացիության կրճատման մասին» (ընդունվել է 30.08.1961թ., ՀՀ միացել է 16.03.1994թ.)
20. Կոնվենցիա «Քաղաքական ապաստանի մասին» (ընդունվել է 26.12.1933թ., ուժի մեջ է մտել 28.03.1935թ.)

21. Կոնվենցիա «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ» (ընդունվել է 10.12.1984թ., ՀՀ վավերացրել է 09.06.1993թ.)
22. Կոնվենցիա «Կնոջ քաղաքական իրավունքների մասին» (ընդունվել է 20.12.1952թ., ուժի մեջ է մտել 07.07.1954թ.)
23. Կոնվենցիա «Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին» (ընդունվել է 20.02.1957թ., ուժի մեջ է մտել 11.08.1958թ., ՀՀ վավերացրել է 16.03.1994թ.)
24. Կոնվենցիա «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» (ընդունվել է 21.12.1965թ., ՀՀ վավերացրել է 29.12.1993թ.)
25. Կոնվենցիա «Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականաթյան վերացման մասին» (ընդունվել է 18.12.1979թ., ՀՀ վավերացրել է 09.06.1993թ.)
26. Կոնվենցիա թիվ 103 «Մայրության պաշտպանության մասին» (ընդունվել է 28.06.1952թ., ուժի մեջ է մտել 07.09.1955թ.)
27. Կոնվենցիա «Երեխայի իրավունքների մասին» (ընդունվել է 20.11.1989թ., ուժի մեջ է մտել 09.12.1990թ., ՀՀ վավերացրել է 01.06.1992թ.)
28. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կոնվենցիա «Կրթության բնագավառում խտրականաթյան դեմ պայքարի մասին» (ընդունվել է 14.12.1960թ., ՀՀ վավերացրել է 22.06.1993թ.)
29. Եվրոպական կոնվենցիա «Հանձնման մասին» (ընդունվել է 13.12.1957թ., ՀՀ վավերացրել է 21.11.2001թ.)
30. Եվրոպական մշակութային կոնվենցիա (ընդունվել է 19.12.1954թ., ՀՀ վավերացրել է 18.02.1997թ.)
31. Շրջանակային կոնվենցիա «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» (ընդունվել է 10.11.1994թ., ՀՀ վավերացրել է 17.02.1998թ.)
32. Կոնվենցիա «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուս 25.06.1998թ., ՀՀ վավերացրել է 14.05.2001թ.)
33. Կոնվենցիա «Ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» (ընդունվել է 26.11.1968թ., ՀՀ վավերացրել է 29.03.1993թ.)
34. Կոնվենցիա «Գործող բանակներում վիրավորների ու հիվանդների վիճակի բարելավման մասին» (Ժնև 12.08.1949թ., ՀՀ վավերացրել է 29.03.1993թ.)
35. Կոնվենցիա «Ծովում զինված ուժերի անձնակազմին պատկանող վիրավորների, հիվանդների և նավաբեկության ենթարկված անձանց վիճակի բարելավման մասին» (Ժնև 12.08.1949թ., ՀՀ վավերացրել է 29.03.1993թ.)
36. Կոնվենցիա «Ռազմագերիների հետ վարվեցողության մասին» (Ժնև 12.08.1949թ., ուժի մեջ է մտել 21.10.1950թ., ՀՀ վավերացրել է 29.03.1993թ.)
37. Կոնվենցիա «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» (Ժնև 12.08.1949թ., ՀՀ վավերացրել է 29.03.1993թ.)
38. Միջազգային ռազմական կոնֆլիկտների զոհերի պաշտպանութաւն մասին ժնևի կոնվենցիաներին կից լրացուցիչ արձանագրություն (ընդունվել է 08.06.1977թ., ՀՀ վավերացրել է 29.03.1993թ.)
39. Ոչ միջազգային բնույթի զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ ժնևի կոնվենցիաներին կից արձանագրություն (ընդունվել է 08.06.1977թ., ՀՀ վավերացրել է 29.03.1993թ.)
40. Կոնվենցիա «Ստրկության մասին» (ընդունվել է 25.09.1926թ.)

41. Լրացուցիչ կոնվենցիա «Ստրկությունը, ստրկավաճառությունը և ստրկության նման հաստատություններն ու սովորույթները վերացնելու մասին» (ընդունվել է 07.09.1956թ., ուժի մեջ է մտել 30.04.1957թ.)
42. Կոնվենցիա «Մարդկանց առևտրի և երրորդ անձանց կողմից պոռնկության շահագործման դեմ պայքարելու մասին» (հավանության է արժանացել 02.12.1949թ., ուժի մեջ է մտել 25.07.1951թ.)
43. «Աշխատանաքային միգրացիայի և աշխատավոր միգրանտների սոցիալական պաշտպանության ոլորտներում համագործակցության մասին համաձայնագիր (ստորագրվել է 1994թ. ապրիլի 15-ին բոլոր ԱՊՀ անդամ երկրների կողմից, ՀՀ համար ուժի մեջ է մտել 1996թ. փետրվարի 26-ից)

Հիմնական գրականություն

1. Права человека. Учебник для вузов / Ответственный редактор – член-корр. РАН, доктор юридических наук Е. А. Лукашева, 3-е изд., перераб – М.: Издательство НОРМА 2015. – 512 с.
2. Այվազյան Վ. Ն. Մարդու իրավունքներ (ուսումնական ձեռնարկ), Եր. 2014թ. «ԵՊՀ» հրատարակչություն 560 էջ
3. Պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ, 2-րդ լրամշակված հրատարակություն, Երևան, «Լուսաբաց հրատարակչատուն», 2016, 628 էջ , Հեղինակային խումբ
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, 1086 էջ
5. Միխայել Զաքս, Սահմանադրական իրավունք II, Հիմնական իրավունքներ, Մաս 1, Հիմնական իրավունքների տեսություն, 2-րդ հրատ., «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2015, 312 էջ
6. Դանիելյան Գ., Վարչական վարույթ և դատավարություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, Տիգրան Մեծ, 2011, 384 էջ
7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումներն օրենքների և այլ իրավական ակտերի նորմերի սահմանադրականության վերաբերյալ (1996-2010 թթ.), Երևան, Նժար, 2011, 996 էջ
8. ՀՀ ՄԻՊ զեկույցներ 2004-2021թթ.
9. Павлова Л.В. Право прав человека, Минск, БГУ, 2005, 195 с. 7. Бадальянц Ю.С., Ягофаров Д.А. Права человека, уч. пособье, изд. М. Рязань, 2006, 599 с. 8. Права человека: Учебное пособие / Е.В. Гулин. - М.: ИЦ РИОР: НИЦ Инфра-М, 2013. – 175 с.
10. Нешатаева Т. Н. Решения Европейского Суда по правам человека: новеллы и влияние на законодательную и правоприменительную практику. М., Норма : Инфра-М, 2013
11. Пикте Ж., Развитие и принципы международного гуманитарного права. М. 2001
12. Котляров И.И. Международное гуманитарное право. – М., 2003
13. Гассер Х. П. Международное гуманитарное право. Введение. 1995г.
14. Ведение военных действий. Сборник Гаагских конвенций и иных международных документов. М., МККК.2004.
15. Имплементация международного гуманитарного права. Сборник статей и документов. М., МККК. 2004.
16. Документы по международному гуманитарному праву, применяемому во время вооруженных конфликтов (https://www.garant.ru/company/cooperation/gov/list/coop_gdrf/docs_gp/)

17. Гулин Е.В. Права человека (правовой статус личности). РИОР, 2024
18. Доклады Защитника прав человека РА
19. Доклады Уполномоченного по правам человека в РФ
20. Доклады УВКПЧ
21. Доклады договорных органов ООН
22. Хрестоматия по всеобщей истории государства и права/ Под ред. К.И.Батыра и Е.В.Поликарповой. Т.2. М., 1996
23. Մարդու իրավունքների Եվրոպական դատարան Երևան, 2004
24. Վ. Այվազյան. Մարդո իրավունքներ –Տիգրան Մեծ, Երևան, 2014
25. Ժան Պիկտե Միջազգային մարդասիրական իրավունք, ԿԽՄԿ, Ժնև, 2000 թ., 112 էջ
26. Միջազգային մարդասիրական իրավունք/ Պատասխաններ ձեր հարցերին, ԿԽՄԿ, Ժնև, 2024թ. https://lib.armedu.am/article/500
27. Manfred Nowak, U.N. Covenant on Civil and Politikal Rights CCPR Commentary, 2-ndrevised edition, N.P., Publisher, 2005
28. Մարդու իրավունքների Եվրոպական դատարան Երեվան, 2004
29. Վ. Այվազյան. Մարդո իրավունքներ –Տիգրան Մեծ, Երեվան, 2014
30. Ուղեցույց կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ. ազատության եվ անձնական անձեռնմխելիության իրավունք, Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2014թ.
31. Ուղեցույց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի վերաբերյալ Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում, Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2016թ.
32. Нерсесянц В. С. Общая теория права и государства. НОРМА – ИНФРА-М, Москва,1999
33. Учебное пособие по контролю за соблюдением прав человека.-Нью-Йорк, Женева,2002
34. Система договоров Организации Объединенных Наций в области прав человека.-ООН, Нью-Йорк и Женева, 2012г.
35. Карташкин В. А. Права человека: международная защита в условиях глобализации. М., : Норма, 2009
36. Максуров А. А. Защита права собственности в Европейском суде по правам человека. М. 2012
37. Нешатаева Т. Н. Решения Европейского Суда по правам человека: новеллы и влияние на законодательную и правоприменительную практику. М., Норма : Инфра-М, 2013
38. Пикте Ж., Развитие и принципы международного гуманитарного права. М. 2001
39. Ведение военных действий. Сборник Гаагских конвенций и иных международных документов. М., МККК. 2004
40. Имплементация международного гуманитарного права. Сборник статей и документов.М., МККК. 2004
41. Документы по международному гуманитарному праву, применяемому во время вооруженных конфликтов (https://www.garant.ru/company/cooperation/gov/list/coop_gdrf/docs_gp/)
42. Доклады Защитника прав человека РА
43. Доклады Уполномоченного по правам человека в РФ
44. Доклады УВКПЧ и УВКБ ООН
45. Доклады договорных органов ООН
46. Manfred Nowak, U.N. Covenant on Civil and Political Rights CCPR Commentary, 2-nd revised edition, N.P., Publisher, 2005

47. UN Standard Minimum Rules for the Treatment of Prisoners, adopted by the first United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of offenders, Geneva, 1955
48. UN Basic Principles on the Use of Force and Firearms by Law Enforcement Officials, adopted by the Eighth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Havana, Cuba, 1990
49. UN Body of Principles for the Protection of All Persons under Any Form of Detention or Imprisonment, Resolution of the General Assembly 43/173 of 9 December 1988
50. UN Basic Principles on the Role of Lawyers, adopted by the eighth United Nations Congress on the Prevention of Crime and Treatment of Offenders, held in Havana, 1990
51. UN Basic Principles on the Independence of the Judiciary, 1985
52. CPT Standards, Substantive Sections of the CPT's Reports, CPT, 2001
53. Alston, Ph., Special Rapporteur on extra-judicial, summary or arbitrary executions, Report to the Human Rights Commission, 2006, UN Doc. E/CN.4/2006/53
54. Alston, Ph., Special Rapporteur on extra-judicial, summary or arbitrary executions, Report to the Human Rights Commission, 2007, UN Doc. A/HRC/4/20
55. Human Rights Committee (HRC), General Comment 6, 1982
56. HRC, General Comment 8, 1982
57. HRC, General Comment 10, 1983
58. HRC, General Comment 13, UN Doc. HRI/GEN/1/Rev.7, 129-130, 1984
59. HRC, General Comment 14, 1984
60. HRC, General Comment 16, 1988
61. HRC, General Comment No. 20, UN Doc. HRI/GEN/1/Rev.7, 150-153, 1992
62. HRC, General Comment No. 21, HRI/GEN/1/Rev.7, 133-134, 1992HRC, General Comment No. 31, 26 May 2004, UN Doc. CCPR/C/21/Rev.1/Add.13
63. HRC, General Comment 29
64. HRC, General Comment 32
65. CAT, General Comment No. 1, UN Doc. A/53/44, Annex IX, 1998
66. ICESCR Committee, General Comment No. 14, 2000, UN Doc. E/C.12/2000/4
67. ICESCR Committee, General Comment No. 3, 1990
68. European Prison Rules, 2006
69. White and Ovey: The European Convention on Human Rights
70. Harris, O'Boyle, and Warbrick, Law of the European Convention on Human Rights, 2014
71. Тематические подборки, подготовленные пресс-службой Европейского суда по правам человека, http://www.echr.coe.int/Pages/home.aspx?p=press/factsheets/russian
72. Руководство по Статье 6 Конвенции, Право на справедливое судебное разбирательство (гражданско-правовой аспект), Совет Европы / Европейский суд по правам человека, 2013
73. Руководство по Статье 6 Конвенции, Право на справедливое судебное разбирательство (уголовно-правовой аспект), Совет Европы/Европейский суд по правам человека, 2014

Հանրագիտարան

1. Права человека: энциклопедический словарь / гл. ред. С. С. Алексеев. М.: Норма, 2009

Լրացուցիչ գրականություն

1. Нерсесянц В. С. Общая теория права и государства. НОРМА – ИНФРА-М, Москва, 1999
2. Витрук Н. В. Общая теория правового положения личности. – М.: Норма, 2008
3. Права человека : учебник / отв. ред. Е. А. Лукашева. – М.: Норма, 2009г.

4. Учебное пособие по контролю за соблюдением прав человека.-Нью-Йорк, Женева, 2002
5. Система договоров ООН в области прав человека.-ООН, Нью-Йорк и Женева, 2012г.
6. Встраивание прав человека в повседневную практику.-Лондон, СК, февраль 2012г.
7. Алексеев С. С. Государство и право. М., Проспект, 2010
8. Де Сальвиа М. Европейская конвенция по правам человека. – СПб. : Юридический центр Пресс, 2004
9. Зорькин В. Д. Конституция в XXI веке. Сравнительно-правовое исследование. М. Норма
10. 2012Карташкин В. А. Права человека: международная защита в условиях глобализации. М. Норма, 2009
11. Максуров А. А. Защита права собственности в Европейском суде по правам человека. М. 2012

Համացանցային կայքեր

www.un.org
www.coe.int
https://www.osce.org
https://www.icrc.org/ru
https://ombuds.am
www.arlis.am
http://www.parliament.am
https://www.president.am/hy
http://uhri.ohchr.org/ru
https://www.pravo.gov.ru
https://concourt.am/ru
www.hrea.org/ru/learn/guides/europe.html (Европейская система защиты прав человека)
www.terralegis.org/terra/lek/spr9_1.html (Система защиты прав человека ООН)

Ստուգարքի հարցաշար

1. Մարդու իրավունքների հասկացությունը: Մարդու իրավունքների հիմնարար բնույթը:
2. Մարդու իրավունքների միջազգային իրավունքի աղբյուրները:
3. Իրավունքների և ազատությունների դասակարգումը: Մարդու իրավունքների չորս սերունդները: Հիմնական իրավունքների և ազատությունների հասկացությունը և առանձնահատկությունները: Բացարձակ իրավունքներ:
4. Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային/տարածաշրջանային դատական մարմինները:
5. Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային/տարածաշրջանային քվազի-դատական մարմինները:
6. Միջազգային քրեական դատարանը:
7. Միջազգային/տարածաշրջանային դատական մարմիններ որոշումներից որևէ մեկի վերլուծությունը:
8. Իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը և սահմանները: Սահմանափակման ենթակա և սահմանափակման ոչ ենթակա իրավունքները:
9. Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Միջազգային պրակտիկա:
10. Անձի իրավական կարգավիճակի հասկացությունը և այն պայմանավորող հանգամանքները: Քաղաքացիության հասկացությունը: Երկքաղաքացիություն,

բազմաքաղաքացիություն։ Օտարերկրացիների իրավական վիճակը և քաղաքական ապաստանի իրավունքը։

11. Փախստականների վերաբերյալ միջազային իրավունքը և ազգային օրենսդրությունը, փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, փախստականների կարգավիճակը։ Ազգային (ՀՀ/ՌԴ) օրենսդրություն, ենթաօրենսդրական ակտեր։
12. Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի սահմանադրական արգելքը։ «Խոշտանգում» և «անմարդկային վերաբերմունք» հասկացությունները։ ՄՔԴ-ի որոշման օրինակ և վերլուծություն։
13. Օրենքի առջև հավասարությունն ու խտրականության արգելքը։ Դրանց սահմանադրաիրավական ամրագրումը։ Հիմնական կոնվենցիաներ։
14. Կյանքի իրավունքը։ Մարդու կյանքի իրավունքի պաշտպանության հիմնական ուղղությունները։ Մահապատիժ։ Ազգային և ՄԻԵԴ-ի պրակտիկա։
15. Անձի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը և դրա երաշխիքները։ Մարդուն ազատությունից զրկելու սահմանադրական հիմքերը։ ՄԻՊ զեկույցներից օրինակներ և վերլուծություն։
16. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը,
17. Բնակարանի անձեռնմխելիությունը։ Բնակարանի խուզարկությունը և զննությունը։
18. Մտքի,խղճի և կրոնի ազատությունը։ Դրանց իրականացման ձևերն ու եղանակները, սահմանափակման հիմքերը։ Կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակը։ Հարցի առդականությունը։
19. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիության իրավունքը ու դրանց սահմանադրական երաշխիքները, սահմանափակման հիմքերը։ Սոցիալական ցանցերում արտահատվելու ազատությունը և օրինական սահմանափակման հիմքերը։
20. Կարծիքի ազատ արտահայտման և մարդու ազատ գործելու իրավունքը։ Դրանց սահմանադրական երաշխիքները և սահմանափակման հիմքերը։
21. Տեղեկություններ ստանալու իրավունքը, դրա սահմանադրական երաշխիքները և սահմանափակման հիմքերը։
22. Միավորումներ կազմելու իրավունքը։ Կուսակցություններ և արհմիություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը։ Դրա սահմանադրական երաշխիքները և սահմանափակման հիմքերը։
23. Հավաքների ազատության բովանդակությունը, սահմանադրական երաշխիքները և սահմանափակման հիմքերը։
24. Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը։
25. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրները և դրանց իրականացման ուղղությունները։
26. Տնտեսական իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները։
27. Մշակութային իրավունքների պաշտպանությունը; մշակութային արժեքների միջազգային պաշպանությունը։
28. Երեխայի իրավական կարգավիճակը։ Երեխայի իրավունքների պաշտպանությունը։
29. Կանանց իրավական վիճակը։ Կանանց, որպես առանձին կատեգորիայի անձանց, իրավունքների ու ազատությունների իրականացման առանձնահատկությունները։
30. Հաշմանդամների իրավական վիճակը։
31. Ազգային փոքրամասնությունների իրավական վիճակը։
32. Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ներպետական միջոցների բովանդակությունը։ Մարդու իրավունքների և ազատությունների

պաշտպանությունը Հանրապետության օրենսդիր իշխանության բնագավառում։ Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Հանրապետության գործադիր իշխանության բնագավառում։ Մարդու իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը։

33. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը Հայաստանում։ Դրա դերը մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում։
34. Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ներպետական այլ միջոցներ (օրենքի և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելումը, ապացույցների անթույլատրելությունը և ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը,վնասի հատուցման իրավունքը)։ Իրավաբանական օգնության և պաշտպան ունենալու իրավունքը։
35. Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ներպետական այլ միջոցներ (օրենքի և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելումը, ապացույցների անթույլատրելությունը և ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը,վնասի հատուցման իրավունքը)։ Իրավաբանական օգնության և պաշտպան ունենալու իրավունքը։
36. Մարդու իրավունքների և ազատությունների միջազգային պաշտպանության հասկացությունն ու բովանդակությունը, դրանց վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերը և դրանց դասակարգումը։
37. Մարդու իրավունքների և ազատությունների միջազգային պաշտպանության կոնվենցիոն կառուցակարգերը։ Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ՄԱԿ-ի համակարգում։ ՄԱԿ-ի մարմինները։
38. Պատասխանատվությունը միջազգային իրավունքի դեմ հանցագործությունների համար։ Հռոմի ստատուտ։ Միջազգային քրեական դատարան։ Միջազգային այլ դատարաններ և տրիբունալներ։
39. Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին կոնվենցիա, ցեղասպանությունը որպես մարդու իրավունքների խախտման ծայրահեղ դրսևորում և մարդկության դեմ հանցագործություն։
40. Պատերազմական հանցագործությունները, մարդասիրության/մարդկության դեմ հանցագործությունները, ագրեսիայի հանցագործությունը որպես ՄՔԴ քննության ենթակա գործեր։

Թեստ (օրինակ)

1. Տնտեսական իրավունքները նախատեսված են
   ա) քաղաքացիական օրենսգրքով
   բ) ձեռներեցության մասին օրենքով
   գ) աշխատանքային օրենսգրքով
   դ) քրեական օրենսգրքով
2. Հայաստանում Սահմանադրության համաձայն բարձրագույն արժեք է հանդիսանում՝
   ա) պետությունը
   բ) տարածքը
   գ) գործադիր իշխանությունը
   դ) այլ (հստակեցնել) _____
3. ՀՀ Սահմանադրությունը սահմանում է՝
   ա) աշխատանքի իրավունքը

բ) աշխատելու պարտականությունը
գ) աշխատանքի ազատ ընտրության իրավունքը
դ) անվտանգության և հիեգիենայի պահանջները բավարարող աշխատանքի իրավունքը

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը
   ա) Հայաստանի հետ անձի անխզելի կապն է, որն արտահայտվում է փոխադարձ իրավունքների ու պարտականությունների ամբողջականությամբ
   բ) Հայաստանի հետ անձի հաստատուն իրավական կապն է, որն արտահայտվում է փոխադարձ իրավունքների ու պարտականությունների ամբողջականությամբ
5. Մարդու և քաղաքացու պարտականությունները
   ա) վճարել հարկերը
   բ) աշխատել
   գ) անցնել զինվորական ծառայություն
   դ) ստանալ բարձրագույն կրթություն
   ե) անառարկելիորեն ենթարկվել վերադաս ղեկավարությանը
6. Մարդն ունի՞ պարտականություններ հասարակության առջև՝
   ա) այո
   բ) ոչ
7. Ինչպիսի՞ սահմանափակումների պետք է ենթարկվի մարդն իր իրավունքներն ու ազատություններն իրացնելիս _____
8. Թվարկեք ՄԻՄԲ բոլոր փաստաթղթերը և դրանց ընդունման ամսաթվերը
   _____
9. Ինչու՞ են դաշնագրերն ու դրանց արձանագրություններն ընդունվել առանձին
   _____
10. Ինչո՞վ է տարբերվում հռչակագիրը դաշնագրից/կոնվենցիայի
    _____